



# Հովհաննես Թումանյան

## Մոծակն ու մրջյունը

Գիծ Մոծակի պարի ժամին  
Զարկեց հանկարծ աշնան քամին,  
Ուժը խռեց, ուշը տարավ:  
Գիծը մին էլ մըտիկ արավ,

Որ էն արև  
Աշխարհըն արդեն պատած ողջ սև,  
Լացով, թացով սուզ է անում,  
Դողում, պաղում ու դականում...  
Շուտիկ, շուշտիկ իրեն կինն էլ

Սուսիկ-փուսիկ կողքից կորել,  
Ով գիտի՝ ինչ ծակ էր գրտել,  
Մինչև գարուն մեջը մըտել:  
Սոված, սառած  
Ու սալարած

Վեր թրոավ՝ վար, դես ընկավ, դեն,  
Ժիր Մըրջյունի տարուկ ու շեն  
Բունը հիշեց, եկավ գընաց,  
Դրոան առջև տըխուր տըզզաց.  
Բա՛ց արեք, բա՛ց...

Էս տարածամ թղշվառ ձենից  
Կոպիտ, թուխ-թուխ,  
Հաստագըլուխ  
Մի պահապան զարթնեց քնից,  
Ներսի մըթնում մի կերպ արավ,

Փակած դուռը նեղ ծերպ արավ,  
Տեսավ՝ սևով, թևով զուգված՝  
Դրոան առջև մինք տընկված,  
Ոտները թել,  
Ինքը մի գել:

Ճե՛յ, ո՞վ ես դու,  
Ա՛խալերացու:  
Տը՛զ-պը՛զզ, ասավ, Մոծակն եմ ես:  
Բա չե՞ս ասիլ՝ Էսպես, Էսպես.  
Ամառն ամբողջ,

Ուրախ, առողջ,  
Պայծառ ու տաք  
Արևի տակ  
Կինըս աշխույժ սազ էր ածում,  
Ես էլ անհոգ խընդում, ցընծում,

Տեսակ-տեսակ պարեր պարում,  
Սըրա նըրա թուշն համբուրում  
Ու վայելում ամեն բանից,  
Ամեն բարուց ու սեղանից,  
Լիքը այզում,

Ճահճոտ մարզում,  
Ճոխ տըներում,  
Պալատներում...  
Մի անզամ էլ, երբ ոք էսպես

## Պարում Էի, մինը անտես

Էնպես զարկեց՝ ուշքը անցավ:  
Ուշքի որ գամ՝ ի՞նչ տեսնեմ լավ,  
Երկինքը թուխա, երկիրը սև,  
Դառը քամի, սառը անձրև,  
Արար աշխարհ պաղել, փոխվել,

Կողքիցը Էլ կինս է փախել...  
Էլ ի՞նչ ասեմ, ողջը մի-մի  
Էն ի՞նչ լեզու կարա պատմի  
Կամ ի՞նչ բերան,  
Չըտեսնըվա՛ծ, հըրաշք մի քան...

Ճիմի Էսպես՝ սոված, մենակ,  
Մընացել եմ պատերի տակ,  
Տեղ չի ունեմ, կեր չի ճարվում,  
Ես Էլ եմ ին շատ մըճըրվում.  
Բայց ի՞նչ անեմ, ո՞ւր գընամ Էլ,

Երեսս Էլի ձեզ եմ արել:  
Աստծու սիրուն, մի՛ խընայեք,  
Ես մի ձըմեռ շահեք, պահեք,  
Մինչև նորից գարուն բացվի,  
Աշխարհըն Էլ ետ բարով լըցվի:

Դե լա՛վ, դու կաց, ներս գընամ ես,  
Տեսնենք ներսից ինչ կասեն քեզ:  
Ասավ պահնորդն ու մեշեմեջ  
Կոկ սենյակներն անցավ անվերջ,  
Մինչև հասավ ներսի տունը,

Ուր ապրում Էր մեծ Մըրջյունը՝  
Առատ կյանքով,

Իր համայնքով:

Գընաց իրենց լեզվով հայտնեց,  
Մըրջյունը լուռ լրսեց, մըթնեց,

Ու ետ դարձավ Էսպես ասավ.  
Գիծ Մոծակի համա՞ր եմ ես  
Ողջ ամառը արևակեզ՝  
Էնքան ջանքով  
Ու տանջանքով  
Տուն տեղ դրբել, ճամփա հարթել,  
  
Ամբար շինել, պաշար կիտել,  
Որ ամառը ծույլ պըտըտի,  
Զմեռը զա նըստի ուտի՞...

Մեր ծույլերին ջարդել ենք մենք,  
Ուրիշ ծույլի՞ քերենք պահենք...  
Կերթաս կասես էդ անպետքին.  
Բանի, գործի ժամանակին  
Ով վոխանակ աշխատելու,

Ուշը ու միտքը տա խընդալու,  
Պարապ շըրջի, երգի, պարի,  
Սրբա նըրա քուշն համբուրի,  
Էս կուռ վազի, էն կուռ ցատկի,  
Վերջը էդպես պիտի սատկի:

1916